3573

5140

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ՑԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

20262

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵ՛Ր ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ՆԱԽԱԳԻԾԸ, ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ՀԱՍՏԱՏԵԼ։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Մոսկվա, Կրեմլ
5 դեկտեմբերի 1936 թ.։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ՝ ԽՍՀՄ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄՇԱԿԵԼ ՑԵՎ ՀԱՍՏԱՏԵԼ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՁՊԵՍ ՑԵՎ ՍԱՀՄԱՆԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Մոսկվա, Կրեմլ
5 դեկտեմբերի 1936 թ.։

Հ 4/4493

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԻ) ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՈՐԸ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ը ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆ։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Մոսկվա, Կրեմլ
5 դեկտեմբերի 1936 թ.։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

ԳԼՈՒԽ I

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է:

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, վորոնք աճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 3. Ամբողջ իշխանությունը ԽՍՀՄ-ում պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Խորհուրդների:

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 5. Սոցիալիստական սեփականությունը ԽՍՀՄ-ում ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոոպերատիվ միավորումների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային տրանսպորտը, բանկերը, կապի

միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհտնտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական վայրերում, պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք են:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային ձեռնարկությունները իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հանրային շինությունները, կազմում են կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Ցուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն, բացի կոլտնտեսային հանրային տնտեսությունից ստացած հիմնական յեկամուտից, անձնական ոգտագործման համար ունի վոչ-մեծ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփականություն՝ ոժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ ոգտագործելու համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սիստեմի հետ միասին, վորը հանդիսանում է տնտեսության տիրապետող ձևը ԽՍՀՄ-ում, որենքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնագործների մանր մասնավոր տնտեսություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը՝ նրանց աշխատանքային յեկամուտների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և տնային ոժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առորյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական ոգտման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև քաղաքացիների անձնական սեփականության ժառանգման իրավունքը, պահպանվում է որենքով:

ՀՈԴՎԱԾ 11. ԽՍՀՄ-ի տնտեսական կյանքը վորոշում և նրան ուղղություն է տալիս պետական ժողովրդատնտեսական պլանը՝ հոգուստ հանրային հարստության ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ԽՍՀՄ-ի անկախության ամրացման և նրա պաշտպանունակության ուժեղացման:

ՀՈԴՎԱԾ 12. ԽՍՀՄ-ում աշխատանքը յուրաքանչյուր աշխատանքի ընդունակ քաղաքացու պարտականությունն է և պատվի գործն է՝ համաձայն «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի:

ԽՍՀՄ-ում իրականացվում է սոցիալիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»:

ԳԼՈՒԽ II

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 13. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը միութենական պետություն է, կազմված հետևյալ իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կամավոր միավորման հիմունքով.

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության.

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Ղազախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

Կիրգիզական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության:

ՀՈԴՎԱԾ 14. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավասությանը, հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների, յենթակա յեն.—

ա) Միությունը միջազգային հարաբերություններում ներկայացնելը, այլ պետությունների հետ պայմանագրեր կնքելն ու նրանց ռատիֆիկացիան.

բ) պատերազմի ու խաղաղության հարցերը.

գ) ԽՍՀՄ-ի կազմի մեջ նոր հանրապետություններ ընդունելը.

դ) ԽՍՀՄ-ի Սահմանադրության կատարման վերահսկողությունը և ԽՍՀՄ-ի Սահմանադրությանը՝ միութենական հանրապետությունների սահմանադրությունների համապատասխանությունն ապահովելը.

ե) միութենական հանրապետությունների միջև սահմանների փոփոխությունների հաստատումը.

զ) միութենական հանրապետությունների կազմում նոր յերկիրներ և մարզեր, նույնպես և նոր ավտոնոմ հանրապետություններ կազմելու հաստատումը.

ը) ԽՍՀՄ-ի պաշտպանության կազմակերպումը և ԽՍՀՄ-ի բոլոր զինված ուժերի ղեկավարումը.

թ) արտաքին առևտուրը՝ պետական մենաշնորհի հիմունքով.

ժ) պետական անվտանգության պահպանությունը.

ի) ԽՍՀՄ-ի ժողովրդատնտեսական պլանների սահմանումը.

լ) ԽՍՀՄ-ի միասնական պետական բյուջեյի հաստատումը, ինչպես նաև միութենական, հանրապետական ու տեղական բյուջեներ կազմելու համար ստացվող հարկերի և յեկամուտների հաստատումը.

խ) ընդհանուր-միութենական նշանակություն ունեցող բանկերի, արդյունաբերական ու գյուղատնտեսական հիմնարկների ու ձեռնարկությունների, ինչպես նաև առևտրական ձեռնարկությունների կառավարումը.

ծ) տրանսպորտի ու կապի կառավարումը.

է) դրամական ու վարկային սիստեմի ղեկավարումը։

ը) պետական ապահովագրության կազմակերպումը։

թ) փոխառություններ կնքելն ու տալը։

ժ) հողօգտագործման, ինչպես նաև ընդերքի, անտառների ու ջրերի օգտագործման հիմնական սկզբունքների սահմանումը։

ի) լուսավորության ու առողջապահության բնագավառներում հիմնական սկզբունքների սահմանումը։

լ) ժողովրդատնտեսական հաշվառման միասնական սիստեմի կազմակերպումը։

խ) աշխատանքի որենսդրության հիմունքների սահմանումը։

ծ) դատարանակազմության և դատավարության որենսդրությունը։ քրեական ու քաղաքացիական որենսդրքերը։

կ) միութենական քաղաքացիության վերաբերյալ որենքները, օտարերկրացիների իրավունքների վերաբերյալ որենքները։

հ) ամնիստիայի մասին ընդհանուր-միութենական ակտերի հրատարակումը։

ՀՈԴՎԱԾ 15։ Միութենական հանրապետությունների սուվերենիտետը սահմանափակված է միայն ԽՍՀՄ-ի Սահմանադրության 14-րդ հոդվածում մատնանշված շրջանակներով։ Այդ շրջանակներից դուրս յուրաքանչյուր Միութենական հանրապետություն պետական իշխանությունն իրականացնում է ինքնուրույն կերպով։ ԽՍՀՄ-ն պահպանում է միութենական հանրապետությունների սուվերեն իրավունքները։

ՀՈԴՎԱԾ 16։ Յուրաքանչյուր Միութենական հանրապետություն ունի իր Սահմանադրությունը, որը հաշվի է առնում հանրապետության առանձնահատկությունները և կառուցված է ԽՍՀ Միության Սահմանադրությանը լիովին համապատասխան։

ՀՈԴՎԱԾ 17։ Յուրաքանչյուր Միութենական հանրապետության իրավունք է վերապահվում ազատ կերպով դուրս գալու ԽՍՀՄ-ից։

ՀՈԴՎԱԾ 18։ Միութենական հանրապետությունների տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրանց համաձայնության։

ՀՈԴՎԱԾ 19։ ԽՍՀՄ-ի որենքները միատեսակ ուժ ունեն բոլոր միութենական հանրապետությունների տերիտորիայում։

ՀՈԴՎԱԾ 20։ Միութենական հանրապետության որենքի և ընդհանուր-միութենական որենքի միջև տարաձայնություն լինելու դեպքում գործում է ընդհանուր-միութենական որենքը։

ՀՈԴՎԱԾ 21։ ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար սահմանվում է միասնական միութենական քաղաքացիություն։

Մեր թենական հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ԽՍՀՄ-ի քաղաքացի։

ՀՈԴՎԱԾ 22. Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Աղով-Սևծովյան, Հեռավոր-Արևելյան, Արևմտյան Սիբիրի, Կրասնոյարսկի, Հյուսիսային Կովկասի յերկրամասերից. Վորոնեժի, Արևելյան Սիբիրի, Գորկու, Արևմտյան, Իվանովոյի, Կալինինի, Կիրովսկի, Կույբիշևի, Կուրսկի, Լենինգրադի, Մոսկվայի, Ոմսկի, Որենբուրգի, Սարատովի, Սվերդլովսկի, Հյուսիսային, Ստալինգրադի, Չելյաբինսկի, Ցարոսլավլի մարզերից. Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյաթ-Մոնղոլական, Կաբարդինո-Բալկարական, Կալմիկական, Կարելական, Կոմի, Ղրիմի, Մարիական, Մորդվական, Մերձվոլգյան Գերմանացիների, Հյուսիսային Օսեթական, Ուդմուրտական, Չեչենո-Ինգուշական, Չուվաշական, Յակուտական ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետություններից. Ադիգեական, Հրեական, Կարաչայական, Ոյրոթական, Խակասական, Չերկեսական ավտոնոմ մարզերից։

ՀՈԴՎԱԾ 23. Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Վիննիցայի, Դնեպրոպետրովսկի, Դոնեցի, Կիևի, Ողեսայի, Խարկովի, Չերնիգովի մարզերից և Մոլդավական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից։

ՀՈԴՎԱԾ 24. Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են՝ Նախիջևանի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 25. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են՝ Աբխազական ԱԽՍՀ, Աջարական ԱԽՍՀ, Հարավ-Օսեթական ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 26. Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում է Կարա-Կալպակական ԱԽՍՀ։

ՀՈԴՎԱԾ 27. Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում է Լեռնային Բաղախշանի ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 28. Ղազախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Ակտյուբինսկի, Ալմա-Աթայի, Արևելյան Ղազախստանի, Արևմտյան Ղազախստանի, Կարագան-

դայի, Կուստանայի, Հյուսիսային Ղազախստանի, Հարավային Ղազախստանի մարզերից։

ՀՈԴՎԱԾ 29· Հայկական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Թուրքմենական ԽՍՀ և Կիրգիզական ԽՍՀ իրենց կազմում ավտոնոմ հանրապետություններ, ինչպես նաև յերկրամասեր ու մարզեր չունեն։

ԳԼՈՒԽ III

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 30· ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրագույն մարմինը ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն է։

ՀՈԴՎԱԾ 31· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն իրականացնում է Սահմանադրության 14-րդ հոդվածով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը վերապահված բոլոր իրավունքները, ինչ չափով վոր նրանք համաձայն Սահմանադրության չեն մտնում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդին հաշվետու՝ ԽՍՀՄ-ի մարմինների—ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության մեջ։

ՀՈԴՎԱԾ 32· ԽՍՀՄ-ի որենսդրական իշխանությունն իրականացնում է բացառապես ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 33· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պալատից—Միության Խորհրդից և Ազգությունների Խորհրդից։

ՀՈԴՎԱԾ 34· Միության Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ըստ ընտրական շրջանների՝ 300 հազար բնակչից մի պատգամավորի նորմայով։

ՀՈԴՎԱԾ 35· Ազգությունների Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ըստ միութենական և ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուգների, հետևյալ նորմայով· 25-ական պատգամավոր յուրաքանչյուր

միութենական հանրապետությունից, 11-ական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից, 5-ական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ մարզից և 1-ական պատգամավոր յուրաքանչյուր ազգային okրուգից:

ՀՈԴՎԱԾ 36· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդն ընտրվում է չորս տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 37· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատն ել՝ Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդը, իրավահավասար են:

ՀՈԴՎԱԾ 38· Միության Խորհրդին և Ազգությունների Խորհրդին հավասար չափով պատկանում է որենսդրական նախաձեռնություն:

ՀՈԴՎԱԾ 39· Որենքը հաստատված և համարվում, յեթե նա ընդունված է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատների կողմից՝ յուրաքանչյուրի պարզ մեծամասնությամբ:

ՀՈԴՎԱԾ 40· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընդունած որենքները հրապարակվում են միութենական հանրապետությունների լեզուներով, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 41· Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նստաշրջաններն սկսվում և ավարտվում են միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 42· Միության Խորհուրդն ընտրում է Միության Խորհրդի նախագահ և նրան յերկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 43· Ազգությունների Խորհուրդն ընտրում է Ազգությունների Խորհրդի նախագահ և նրան յերկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 44· Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները ղեկավարում են համապատասխան պալատների նիստերը և տնօրինում են նրանց ներքին կարգը:

ՀՈԴՎԱԾ 45· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի յերկու պալատների միացյալ նիստերը հերթով վարում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները:

ՀՈԴՎԱԾ 46· ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանները հրավիրում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը տարեկան յերկու անգամ:

Վոչ-հերթական նստաշրջանները հրավիրում է ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Նախագահությունն իր հայեցողությամբ կամ միութենական հանրապետությունների մեկի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 47. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միջև տարաձայնություն ծագելու դեպքում հարցը հանձնվում է լուծելու պարիտետային հիմունքներով կազմված համաձայնեցուցիչ հանձնաժողովին: Եթե համաձայնեցուցիչ հանձնաժողովը համերաշխ վորոշման չի հանդում կամ յեթե նրա վորոշումը չի բավարարում պալատներից մեկին, հարցը յերկրորդ անգամ քննվում է պալատներում: Յերկու պալատների համերաշխ վորոշման բացակայության դեպքում ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Նախագահությունն արձակում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը և նշանակում է նոր ընտրություններ:

ՀՈԴՎԱԾ 48. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը յերկու պալատների միացյալ նիստում ընտրում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահություն՝ բաղկացած ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահից, նրա տասնեմեկ տեղակալներից, Նախագահության քարտուղարից և Նախագահության 24 անդամից:

ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը հաշվետու է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջ իր ամբողջ գործունեության համար:

ՀՈԴՎԱԾ 49. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝

ա) հրավիրում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանները.

բ) մեկնաբանում է ԽՍՀՄ-ի գործող օրենքները, հրատարակում է հրամանագրեր.

գ) արձակում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը ԽՍՀՄ-ի Սահմանադրության 47-րդ հոդվածի հիման վրա և նշանակում է նոր ընտրություններ.

դ) կազմակերպում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում) իր նախաձեռնությամբ կամ միութենական հանրապետություններից մեկի պահանջով.

ե) վերացնում է ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները՝ օրենքին անհամապատասխան լինելու դեպքում.

զ) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պաշտոնից ազատում և նշանակում է ԽՍՀՄ-ի առանձին Ժողովրդական Կոմիսարներին՝ ԽՍՀՄ-ի Ժո-

զովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի առաջադրմամբ, հետաձգում ներկայացնելով ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդին ի հաստատություն.

ը) պարգևատրում է ԽՍՀՄ-ի շքանշաններով և տալիս է ԽՍՀՄ-ի պատվավոր կոչումներ.

թ) իրականացնում է ներման իրավունքը.

ժ) նշանակում և փոխում է ԽՍՀՄ-ի զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը.

ի) ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պատերազմի վիճակ է հայտարարում ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում կատարվելու դեպքում, կամ այն դեպքում, երբ անհրաժեշտ է կատարել ագրեսիայից փոխադարձաբար պաշտպանվելու միջազգային պայմանագրային պարտավորություններ.

լ) հայտարարում է ընդհանուր և մասնակի զորահավաք.

խ) ռատիֆիկացիայի յե յենթարկում միջազգային պայմանագրերը.

ծ) նշանակում է ԽՍՀՄ-ի լիազոր ներկայացուցիչներ ուսարերկրյա պետություններում և հետ է կանչում նրանց.

կ) ընդունում է իրեն կից ակկրեդիտացիայի յենթարկված ուսարերկրյա պետությունների դիպլոմատիական ներկայացուցիչների հավատարմագրերն ու հետկանչման թղթերը:

ՀՈԴՎԱԾ 50. Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, վորոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի պատգամավորների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադրմամբ՝ պալատները վորոշում են կամ ընդունել առանձին պատգամավորների լիազորությունները, կամ բեկանել նրանց ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 51. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը, երբ անհրաժեշտ դտնի, նշանակում է քննիչ ու վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի վերաբերյալ:

Բոլոր հիմնարկներն ու պաշտոնատար անձերը պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները և նրանց ներկայացնել անհրաժեշտ նյութերն ու վկայագրերը:

ՀՈԴՎԱԾ 52. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորը չի կարող դատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի համաձայնու-

թյան, իսկ այն ժամանակաշրջանում, երբ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նստաշրջաններ չկան, — առանց ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 53. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը պահպանում է իր լիազորությունները մինչև ԽՍՀՄ-ի նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի նոր Նախագահություն կազմվելը:

ՀՈԴՎԱԾ 54. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա արձակվելու դեպքում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց կամ նրա արձակվելու որից վոչ ուշ քան յերկու ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 55. ԽՍՀՄ-ի նորընտիր Գերագույն Խորհուրդը հրավիրվում է ԽՍՀՄ-ի նախկին կազմի Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից՝ ամենաուշը ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 56. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը յերկու պալատների միացյալ նիստում կազմում է ԽՍՀՄ-ի Կառավարություն—ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

ԳԼՈՒԽ IV

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 58. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները՝ չորս տարի ժամանակով:

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Ներկայացուցչության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների Սահմանադրություններով։

ՀՈԴՎԱԾ 59. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը հանրապետության միակ օրենսդիր մարմինն է։

ՀՈԴՎԱԾ 60. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը՝

ա) ընդունում է հանրապետության Սահմանադրությունը և փոփոխություններ է մտցնում նրա մեջ՝ ԽՍՀՄ-ի Սահմանադրության 16-րդ հոդվածին համապատասխան.

բ) հաստատում է իր կազմի մեջ գտնվող ավտոնոմ հանրապետությունների Սահմանադրությունները և վորոշում է նրանց տերիտորիայի սահմանները.

գ) հաստատում է հանրապետության ժողովրդատնտեսական պլանը և բյուջեն.

դ) ոգտվում է Միութենական հանրապետության դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների ամնիստիայի և ներման իրավունքից։

ՀՈԴՎԱԾ 61. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահություն հետևյալ կազմով. Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ, Նախագահության քարտուղար և Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության անդամներ։

Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները վորոշվում են Միութենական հանրապետության Սահմանադրությամբ։

ՀՈԴՎԱԾ 62. Նիստերը վարելու համար Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է իր նախագահին և նրա տեղակալներին։

ՀՈԴՎԱԾ 63. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը կազմում է Միութենական Հանրապետության Կառավարություն — Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

ԳԼՈՒԽ V

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 64. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմինը ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 65. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու է նրան, իսկ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության առաջ, վորին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 66. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը գործող որենքների հիման վրա և ի կատարումն այդ որենքների՝ հրատարակում է վորոշումներ ու կարգադրություններ և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 67. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր է ԽՍՀՄ-ի ամբողջ տերիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 68. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը՝

ա) միավորում և ուղղություն է տալիս ԽՍՀՄ-ի ընդհանուր-միութենական ու միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատների և իր գերատեսչությանը յենթակա տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին.

բ) միջոցներ է ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանը, պետական բյուջեն իրականացնելու և վարկային-դրամական սիստեմն ամրացնելու համար.

գ) միջոցներ է ձեռք առնում հասարակական կարգն ապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղաքացիների իրավունքները պահպանելու համար.

դ) իրականացնում է ընդհանուր ղեկավարություն ոտա-

երկրյա պետությունների հետ ունեցած հարաբերությունների առսպարեզում.

ե) սահմանում և իրական զինվորական ծառայության կոչվելու յենթակա քաղաքացիների յուրաքանչյուր տարվա կոնտինգենտները, ղեկավարում և յերկրի զինված ուժերի ընդհանուր շինարարությունը.

զ) անհրաժեշտության դեպքում կազմում և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից տնտեսական, կուլտուրական ու պաշտպանության շինարարության գործերի հատուկ Կոմիտեներ և Գլխավոր Վարչություններ:

ՀՈԴՎԱԾ 69. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կառավարման ու տնտեսության՝ ԽՍՀՄ-ի իրավասությանը վերապահված ճյուղերում կասեցնել Միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնել ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

ՀՈԴՎԱԾ 70. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով.

ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարներ.

ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ.

ԽՍՀՄ-ի Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի նախագահ.

ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ.

Ֆթերումների կոմիտեյի նախագահ.

Արվեստի գործերի կոմիտեյի նախագահ.

Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեյի նախագահ:

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍՀՄ-ի Կառավարությունը կամ ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարը, վորոնց ուղղված է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի պատգամավորի հարցապնդումը, պարտավոր են ամենաուշը յերեք որվա ընթացքում գրավոր կամ բանավոր պատասխան տալ համապատասխան պալատում:

ՀՈԴՎԱԾ 72. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մտնում են ԽՍՀՄ-ի իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 73. ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարները համա-

պատասխան Ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ գործող օրենքների, ինչպես նաև ԽՍՀՄ–ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ օրենքների, վորոշումների ու կարգադրությունների, և ստուգում են նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 74. ԽՍՀՄ–ի Ժողովրդական Կոմիսարիատները լինում են կամ ընդհանուր–միութենական, կամ միութենական–հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 75. Ընդհանուր–միութենական Ժողովրդական Կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ԽՍՀՄ–ի ամբողջ տերիտորիայում ղեկավարում են կա՛մ անմիջականորեն, կա՛մ իրենց կողմից նշանակված մարմինների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 76. Միութենական–հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ղեկավարում են, վորպես կանոն, միութենական հանրապետությունների նույնանուն Ժողովրդական Կոմիսարիատների միջոցով և անմիջականորեն կառավարում են միայն վորոշ սահմանափակ թվով ձեռնարկություններ ԽՍՀՄ–ի Գերագույն Խորհրդի նախագահության կողմից հաստատվող ցուցակով:

ՀՈԴՎԱԾ 77. Ընդհանուր–միութենական Ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում հետևյալ Ժողովրդական Կոմիսարիատները.

Պաշտպանության.

Արտաքին գործերի.

Արտաքին առևտրի.

Հաղորդակցության ճանապարհների.

Կապի.

Ջրային տրանսպորտի.

Ծանր արդյունաբերության.

Պաշտպանության արդյունաբերության:

ՀՈԴՎԱԾ 78. Միութենական–հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատների թվին են պատկանում հետևյալ Ժողովրդական Կոմիսարիատները.

Սննդի արդյունաբերության.

Թեթև արդյունաբերության.

Անտառային արդյունաբերության.

Հողագործության.
Հացահատիկային ու անասնաբուծական խորհտնտեսությունների.
Ֆինանսների.
Ներքին առևտրի.
Ներքին գործերի.
Արդարադատության.
Առողջապահության:

ԳԼՈՒԽ VI

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 79. Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 80. Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու է նրան, իսկ Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության առաջ, վերին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 81. Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակում է վորոշումներ ու կարգադրություններ՝ ԽՍՀՄ-ի ու Միութենական հանրապետության գործող որենքների, ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ որենքների, վորոշումների ու կարգադրությունների, և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 82. Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կասեցնելու ավտոնոմ հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խոր-

հուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնելու յերկրամասերի, մարզերի ու ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 83. Միութենական հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Միութենական հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով.

Միութենական հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ.

Նախագահի տեղակալներ.

Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Ժողովրդական կոմիսարներ՝

Մինչի արդյունաբերության.

Թեթև արդյունաբերության.

Անտառային արդյունաբերության.

Հողագործության.

Հացահատիկային ու տնտեսաբուծական խորհրդատվությունների.

Ֆինանսների.

Ներքին առևտրի.

Ներքին գործերի.

Արդարադատության.

Առողջապահության.

Լուսավորության.

Տեղական արդյունաբերության.

Կոմունալ տնտեսության.

Սոցիալական ապահովության.

Մթերումների Կոմիտեյի լիազոր.

Արվեստի գործերի Վարչության պետ.

Ընդհանուր-միութենական ժողովրդական Կոմիսարիատների լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 84. Միութենական հանրապետության ժողովրդական Կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք վերաբերում են Միութենական հանրապետության իրավասությանը:

ՀՈԴՎԱԾ 85. Միութենական հանրապետության ժողովրդական Կոմիսարները համապատասխան ժողովրդական Կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրա-

մանները ու հրահանգները՝ ԽՍՀՄ-ի և Միութենական հանրապետության որենքների, ԽՍՀՄ-ի և Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրություններ, ԽՍՀՄ-ի միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն դրանց:

ՀՈԴՎԱԾ 86. Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարիատները լինում են միութենական-հանրապետական կամ հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 87. Միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը, յենթարկվելով ինչպես Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին, այնպես ել ԽՍՀՄ-ի համապատասխան միութենական-հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 88. Հանրապետական Ժողովրդական Կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը, յենթարկվելով անմիջականորեն Միութենական հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին:

ԳԼՈՒԽ VII

ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 89. Ավտոնոմ հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը ԱԽՍՀ Գերագույն Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 90. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները չորս տարի ժամանակով, ներկայացուցչության այն նորմաներով, վոր սահմանվում են Ավտոնոմ հանրապետության Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 91. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհուրդն ԱԽՍՀ միակ որենսդիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 92. Յուրաքանչյուր Ավտոնոմ հանրապետություն ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յե առնում Ավտոնոմ հանրապետության առանձնահատկությունները և կառուցված է Միութենական հանրապետության Սահմանադրությանը լիովին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 93. Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է Ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահությունն և կազմում է Ավտոնոմ հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ՝ համաձայն իր Սահմանադրության:

ԳԼՈՒԽ VIII

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 94. Յերկրամասերում, մարզերում, ավտոնոմ մարզերում, ոկրուգներում, շրջաններում, քաղաքներում, գյուղերում (ստանիցաներում, գյուղակներում, խուտորներում, ղշլաղներում, աուլներում) պետական իշխանության մարմիններն աշխատավորների պատգամավորների Խորհուրդներն են:

ՀՈԴՎԱԾ 95. Աշխատավորների պատգամավորների յերկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, ոկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական (ստանիցաների, գյուղակների, խուտորների, ղշլաղների, աուլների) Խորհուրդներն ընտրում են համապատասխան յերկրամասի, մարզի, ավտոնոմ մարզի, ոկրուգի, շրջանի, քաղաքի, գյուղի աշխատավորները յերկու տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 96. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդներում ներկայացուցչության նորմաները վորոշվում են միութենական հանրապետությունների Սահմանադրություններով:

ՀՈԴՎԱԾ 97. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները ղեկավարում են կառավարման իրենց յենթակա մարմինների գործունեությունը, ապահովում են պետական կարգի

պահպանումը, որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը, ղեկավարում են տեղական տնտեսական ու կուլտուրական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն։

ՀՈԴՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ԽՍՀՄ-ի և Միութենական հանրապետության որենքներով իրենց տրված իրավունքների սահմաններում։

ՀՈԴՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների յերկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, ոկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեները՝ կազմված նախագահից, նրա տեղակալներից, քարտուղարից ու անդամներից։

ՀՈԴՎԱԾ 100. Փոքր բնակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմինը, միութենական հանրապետությունների Սահմանադրություններին համապատասխան, նրանց կողմից ընտրվող նախագահը, տեղակալը և քարտուղարն են։

ՀՈԴՎԱԾ 101. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվետու են ինչպես աշխատավորների պատգամավորների այն Խորհրդի առաջ, վորն ընտրել է նրանց, այնպես էլ աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհրդի գործադիր մարմնի առաջ։

ԳԼՈՒԽ IX

ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 102. Արդարադատությունը ԽՍՀՄ-ում իրականացվում է ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանի, միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների, յերկրամասային ու մարզային դատարանների, ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատարանների, ոկրուգային դատարանների, ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող՝ ԽՍՀՄ-ի հատուկ դատարանների և ժողովրդական դատարանների միջոցով։

ՀՈԴՎԱԾ 103. Գործերի քննարկումը բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի որենքով հատկապես նախատեսված դեպքերից:

ՀՈԴՎԱԾ 104. ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանը բարձրագույն դատական մարմինն է հանդիսանում: ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանի վրա դրվում է ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների բոլոր դատական մարմինների դատական գործունեության հսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 105. ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանը և ԽՍՀՄ-ի հատուկ դատարաններն ընտրվում են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 106. Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարաններն ընտրվում են միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 107. Ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Դատարաններն ընտրվում են ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 108. Ցերկրամասային ու մարզային դատարանները, ավտոնոմ մարզերի դատարանները, ոկրուգային դատարաններն ընտրվում են աշխատավորների պատգամավորների յերկրամասային կամ մարզային խորհուրդների կողմից կամ ավտոնոմ մարզերի, ոկրուգների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 109. Ժողովրդական դատարաններն ընտրում են չրջանի քաղաքացիները՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա դաղտնի քվեարկությամբ—յերեք տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 110. Դատավարությունը կատարվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացումը գործի նյութերին թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես դալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 111. Գործերի քննությունը ԽՍՀՄ-ի բոլոր դատարաններում, վորչափով որենքը բացառություններ չի նախատեսում, կատարվում է դռնբաց, ապահովելով մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 112. Դատավորներն անկախ են և միայն օրենքին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 113. Բոլոր ժողովրդական Կոմիսարիատների և նրանց դերատեսչությանը յենթակա հիմնարկների, ինչպես առանձին պաշտոնատար անձերի, նույնպես և ԽՍՀՄ-ի քաղաքացիների կողմից օրենքները ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն հսկողությունը դրվում է ԽՍՀՄ-ի Դատախազի վրա:

ՀՈԴՎԱԾ 114. ԽՍՀՄ-ի Դատախազը նշանակվում է ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից յոթ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 115. Հանրապետական, յերկրամասային, մարզային դատախազները, ինչպես նաև ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատախազները, նշանակվում են ԽՍՀՄ-ի Դատախազի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 116. Ոկրուգային, շրջանային և քաղաքային դատախազները նշանակվում են միութենական հանրապետությունների դատախազների կողմից՝ ԽՍՀ Միության Դատախազի հաստատմամբ—հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 117. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրականացնում են անկախ տեղական վորևե մարմնից, յենթարկվելով միայն ԽՍՀՄ-ի Դատախազին:

ԳԼՈՒԽ X

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 118. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, խորհրդային հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճմամբ, տնտեսական ճգնաժամերի հնարավորության վերացմամբ և գործազրկության լիկվիդացիայով:

ՀՈԴՎԱԾ 119. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք։

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատանքային որը կրճատելով-հասցնելով 7 ժամի, բանվորների ու ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդ, վորի ընթացքում պահպանվում է նրանց աշխատավարձը, աշխատավորներին սպասարկելու համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով։

ՀՈԴՎԱԾ 120. ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում։

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների համար պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, աշխատավորներին ձրի բժշկական ոգնություն ցույց տալով, աշխատավորներին ոգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով։

ՀՈԴՎԱԾ 121. ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով։

ՀՈԴՎԱԾ 122. Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։

Կանանց այդ իրավունքների իրականացման հնարավորությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխա-

տավարձը, ծննդատների, մանկամսուրների ու մանկապարտեզնե-
րի լայն ցանցով։

ՀՈԴՎԱԾ 123. ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարու-
թյունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակա-
կան-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ
նրանց ազգությունից ու ռասայից, հանդիսանում է անխախտ
օրենք։

Իրավունքների վերևից ուղղակի կամ անուղղակի սահմա-
նափակումը, կամ ընդհակառակը, ռասայական ու ազգային պատ-
կանելությունից յելնելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ
անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ռա-
սայական ու ազգային բացառիկության կամ ատելության ու ար-
համարհանքի ամեն տեսակ քարոզ—պատժվում են օրենքով։

ՀՈԴՎԱԾ 124. Քաղաքացիների համար խղճի ազատություն
ապահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀ Մ-ությանից մեջ բաժան-
ված է պետությունից և դպրոցը՝ յեկեղեցուց։ Կրոնական պաշ-
տամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրո-
պագանդայի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների
համար։

ՀՈԴՎԱԾ 125. Աշխատավորների շահերին համապատասխան
և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ԽՍՀՄ-ի
քաղաքացիների համար օրենքով ապահովվում է.

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների ու միտինգների ազատություն,

դ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատություն։

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխա-
տավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով
տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոց-
ներ, կապի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն
իրականացնելու համար անհրաժեշտ այլ նյութական պայմաններ։

ՀՈԴՎԱԾ 126. Աշխատավորների շահերին համապատասխան
և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնագործու-
նեությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպա-
տակով ապահովվում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավունքը՝
միավորվելու հասարակական կազմակերպությունների մեջ՝ ար-
հեստակցական միություններ, կոոպերատիվ միավորումներ, յե-
րիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտ-

պանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ. իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, որն աշխատավորների առաջավոր ջոկատն է՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու և զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիզն է ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 127. ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար ապահովվում է անձի անձեռնմխելիություն: Վոչ վոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 128. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունն ու նամակագրության գաղտնիությունը պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 129. ԽՍՀՄ-ն ապաստանի իրավունք է վերապահում ոտարերկրյա քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեության, կամ ազգային-ազատագրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 130. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 131. ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վոտնձգություն անող անձերը ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 132. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք է հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կար-

միր Բանակում ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն է։

ՀՈԴՎԱԾ 133. Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է։ Հայրենիքին դավաճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն։

ԳԼՈՒԽ XI

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 134. Աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների—ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի, միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների, աշխատավորների պատգամավորների յերկրամասային ու մարզային Խորհուրդների, ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների, ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների, աշխատավորների պատգամավորների ոկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական (ստանիցայի, գյուղակի, խուտորի, ղշլաղի, աուլի) Խորհուրդների,—պատգամավորների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ։

ՀՈԴՎԱԾ 135. Պատգամավորների ընտրություններն ընդհանուր են. ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիները, վորոնք 18 տարեկան են, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրավունքների զրկումով։

ՀՈԴՎԱԾ 136. Պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն, բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։

ՀՈԴՎԱԾ 137. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 138. Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 139. Պատգամավորների ընտրություններն ուղղակի յեն. աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների ընտրությունները, սկսած աշխատավորների պատգամավորների գյուղական ու քաղաքային Խորհրդից մինչև ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը, քաղաքացիները կատարում են անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 140. Պատգամավորների ընտրության ժամանակ քվեարկությունը գաղտնի յե:

ՀՈԴՎԱԾ 141. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների—կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, կոոպերատիվների, յերիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների — համար:

ՀՈԴՎԱԾ 142. Ցուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների պատգամավորների Խորհրդի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ հետ կանչվել ընտրողների մեծամասնության վորոշմամբ, որենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ XII

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 143. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական գերբը բաղկացած է մանգաղից ու մուրճից՝ յերկրագնդի վրա, վորը պատկերված է արեգակի ճառագայթների մեջ ու շրջանակված հասկերով և կրում է միութենական հանրապետությունների լեզուներով գրված «Պրոլետարնե՛ր բոլոր յերկիրների, միացե՛ք» մակագրությունը: Գերբի վերևում կա հնգաթև աստղ:

ՀՈԴՎԱԾ 144· Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական դրոշակը բաղկացած է կարմիր կտորից, որի վերին անկյունում՝ կոթի մոտ նկարված են վոսկեհուռ մանգաղ ու մուրճ և նրանց վերևում հնգաթև կարմիր աստղ՝ շրջանակված վոսկեհուռ յերիզով: Լայնության և յերկարության հարաբերությունն է՝ 1 : 2:

ՀՈԴՎԱԾ 145· Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մայրաքաղաքը Մոսկվա քաղաքն է:

ԳԼՈՒԽ XIII

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 146· ԽՍՀՄ-ի Սահմանադրության փոփոխումը կատարվում է միայն ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի վորոշմամբ՝ ընդունված նրա պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն յերկու յերրորդի մեծամասնությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության խորհուրդների VIII Արտակարգ Համագումարի վորոշումները

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության (Հիմնական Որենքի) հաստատման մասին 2

ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի ընտրությունների մասին 3

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության նոր Սահմանադրության (Հիմնական Որենքի) ընդունումը հավերժացնելու մասին 4

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը

Գլուխ I. Հասարակական կառուցվածքը 7

Գլուխ II. Պետական կառուցվածքը 9

Գլուխ III. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն մարմինները 13

Գլուխ IV. Միութենական հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները . . 17

Գլուխ V. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական կառավարման մարմինները 19

Գլուխ VI. Միութենական հանրապետությունների պետական կառավարման մարմինները 22

Գլուխ VII. Ավտոնոմ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները 24

Գլուխ VIII. Պետական իշխանության տեղական մարմինները 25
Գլուխ IX. Դատարան և դատախազություն . . . 26
Գլուխ X. Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները 28
Գլուխ XI. Ընտրական սիստեմը 32
Գլուխ XII. Գերբը, դրոշակը, մայրաքաղաքը . . . 33
Գլուխ XIII. Սահմանադրությունը փոփոխելու կարգը . 34

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Թարգմ. Ցե. Տ.-Մինասյան
Հայ. թարգմ. խմբ. Ռ. Մարտիրոսյան յեվ Հ. Դոնոյան
Տեխ. խմբ. Գ. Զենյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտ. սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր—4668, հրատ. № 509, պատվ. № 207.
Տիրաժ 100.000.
Հանձնված է արտադրության 22/X 1937 թ.
Ստորագրված է տպելու 8/XI 1937
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան 71.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220041493

(104)

524

А II/41493

ԳԻՆԸ 30 Կ.

КОНСТИТУЦИЯ
(ОСНОВНОЙ ЗАКОН)
СОЮЗА СОВЕТСКИХ
СОЦИАЛИСТИЧЕСКИХ
РЕСПУБЛИК

Армпартиздат. Ереван. 1937

(104)
524
A II 41493

ԳԻՆԸ 30 Կ.

КОНСТИТУЦИЯ
(ОСНОВНОЙ ЗАКОН)
СОЮЗА СОВЕТСКИХ
СОЦИАЛИСТИЧЕСКИХ
РЕСПУБЛИК

Армпартиздат. Ереван, 1937